Արձանագրություն N 2

Երևան քաղաքի կամարանցումների վերանորոգման և գունազարդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

15.05.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի մայիսի 15-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
2	«Սասունասար» ՍՊԸ
3	«Վարդսա» ՍՊԸ
4	«Մառք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի կամարանցումների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	45000	24900		24900

«Սասունասար» ՍՊԸ		30000	6000	36000
«Վարդսա» ՍՊԸ		30000		30000
«Մառք» ՍՊԸ		34500		34500
Երևան քաղաքի կամարանցումների գունազարդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	154800	49700		49700
«Վարդսա» ՍՊԸ		60000		60000
«Մառք» ՍՊԸ		74500		74500
«Սասունասար» ՍՊԸ		100000	20000	120000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի: Մասնակցի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը չի համապատասխանում հրավերով սահմանվածին, մասնավորապես, 1.2 կետում հղում է արված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասին, մինչդեռ հրավերը հրապարակելու դրությամբ գործող օրենսդրությամբ հայտի ապահովումը կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ելնելով վերոգրյալից՝ մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	**Հայտի գնահատականը**
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Անբավարար
«Վարդսա» ՍՊԸ	Բավարար
«Մառք» ՍՊԸ	Բավարար
«Սասունասար» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Գների նվազեցման բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Տ. Իգիթյան)

5.1 Հաշվի առնելով, որ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/122» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացվել է միևնույն նվազագույն գնային առաջարկը՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կանցկացվի գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի:

5.2 Գների նվազեցման միաժամանակյա բնակացությունները կկայանան 2017 թվականի մայիսի 18-ին, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 18.05.2017թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան